



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Անգլո-արաբական Գ.

Եզրը Տարեկանայ.

Պղնձեղ Շարժան Գրք.

3704

891-990

ԼԲ-44

4 Պղնձ

1865

507

93

ՆՈՒԷՐ
Ս Ա Ն Կ Ա Ն Ց

ՈՂՁՈՅՆԷՔ ՇԵՈՐՀԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Ի Ն. Ս. ՄԷՋՊՈՒՐՅԱՆԷ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐՈԳ ՍՐԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ


Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ԱՌԱՋՆՈՑ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐԻՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՑ

ՑԵԱՌՆ ՊՕՂՈՍԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ



891.990

Մ-44

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1865

2004

ՆՈՒՅԻՐ

ՄԱՆԿԱՆՑ

ՊԱՏԿԵՐԶՍԻՐ

ژارتاریان کتبخانه سی
استانبول

بیشتر بیلر یوقوشی نومرو ۲۴—۲۶

ՀԱՅԿԱՆԿԱՆԵ ԶՊԱՏԿՈՒԿՈՒՄԸ
Վ. ՄԻ Պ. ԶԱՐԿԱՆԻ ԵՎ Ե. ՊԱՏԿԵՐՍԻՐ
K. MIKHELYAN, Z. ZAKARIAN & CO. 24-28
LIBRAIRES-ÉDITEURS
V. M. ZARTARIAN FRÈRES
STAMBOUL YOUSSEFMAKCHILAN N. 24-28

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. — ՅԱՐԳՈՒՆԻ ՏՊԱՐԱՆԻ.
Constantinople. — Imprimerie Impériale.

1.99 V. =

V-34

ՆՈՒՅԻՐ

Մ Ա Ն Կ Ա Ն Ց

ՁՈՅՆՔ ՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Ի Ն. Ս. ՄԷԶԳՈՒՐԵԱՆԷ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐՈԳ ՍՐԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ԱՌԱՋՆՈՅ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՑ


ՏԵԱՌՆ ՊԵՂՈՍԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1865



Ի

ՅԱԻԿՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ԱՆՄԱՀ ՍԻՐՈՅ

502



ԱՌ

ՎԱԳԱՄԵՌՈՒԿ ՀԱՐԱԶԱՏՆ ԻՄ


ՊԵՏՐՈՍԻԿ



Գողսրիկ հրեւսակ, դու, որ բողիք
Հարազատաց խմբեակդ յերկիր,
Ծնողաց գրկէն գերք գեղ սաստակ
Թրուար յնլիմաց ծաղկահասակ,
Ուր յանթառամ պրսակ փառաց
Պննեց գլխիդ երջանկաց դաս,
Քու անմահ սերդ, ազնիւ Պետրէ՛
Որ սիրեն եղբարց միտք բարախէ,
Մինչ չ'է ծածկամ իս սէւ շիրմակ,
Աւասիկ հեզ ի յիշատակ
Տամ հայ մանկատոյն մեր հաջոտիդ,
Փոքրիկ այս նՈՒԿՐ — երգող սաւիդ:

ՅԱՌԱՋԱԲԱՆ


ԱՌ ՄԱՆԿՏԻՆ



Նուէրիս առաջին տպագրութեան ձեր սիրուն հասակէն գը-
տած ընդունելութիւնը՝ կանխաւ գրաւած ըլլալով իմ առ ձեզ
շնորհապարտութիւնս, պարտաւորեց զիս ի լոյս ընծայել զայն
երկրորդ անգամ, որ քան զառաջինն յաւելեալ ու միանգամայն
կարծեմ յոյժ գեղեցիկ պիտի երևայ, ձեր վառվռուն և նորասէր
դասուն կրկին եռանդ մ' ընծայելու:

Եւ ահաւասիկ:


Ուրեմն և դուք, որ էք արշալոյս հայկազն յուսոյ, սիրեցէք
յառաջանալ ձեր գողտրիկ հասակին հետ ընտիր ուսմանց աս-
պարիզին մէջ ալ, Կաղանդին և Պարզեարաշխութեան օրերը՝
ի խրախոյս յառաջադիմութեան սոյն Պատկերազարդ Նուէրս
ընդունելու:







Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք



Ա Ղ Օ Թ Ք Մ Ա Ն Կ Ա Ն

Կ Ա Ղ Ա Ն Դ Ի Ա Բ Ո Ի Ր

Տէր, Նոր Տարւոյս յայս առաւօտ
Թող նախ երգերս զան բեղի մօտ.
Թէև մանուկ սրտիս Թարգման
Թո՛ւմով լեզուակ մ'ունիմ միայն:

Լեզու երած օրս առաջին՝
Մընօղբս ինձի բեզ հանչցուցին.
Գիտցայ որ հօրս սուրբ Աստուածն էս,
Հաւատացի, զիս շատ սիրէս:

Մօրս գրկին մէջ մինչ դեռահաս,
Քեզ կարդացի նախ՝ Տէր Աստուած
Գէմբս ի ծիծաղ. լեզուիս երգակ
Երկրորդ շարն էր իմ ծնօղի եւ Ազգ:

Մի մեղադրեր, Թէ որ սպշիմ,

Այն ինչ լըսեմ՝ երկիրն ու երկին
Լող եղիցի բառով, ու Տէր,
Սանդձեր ես, և զիս, իմ սէր:

Երբ որ արեւն ամեն առառ
Ծագի տեսքովն իր փայլածու,
Սարսափ, զարմանք զգամ սրտէս,
Բայց այն ու զուն ըստեղծեր ես:

Ազուոր լուսինն ու զոգար աստղեր,
Որ փարփրլին շատ գիշերներ,
Ինչպէս չ'ապշիմ այն ինչ ըսեն,
Թէ քու համար հազիւ կայծ մ'են:

Եւ տարին, որ արդ նորոզի,
Փոփոխուի չորս եղանակի,
Չորան ու մէկմէկ չքնազ Թերթով
Բացուին զոցուին և ինչ շուտով:

Չմենն ճիւնտի մարգարտափայլ,
Գարուն ծաղիօջ գեղեցկափայլ,
Ամառն անուշ պըտուզներով,
Աշունն հարուստ ոգիոյզներով:

Մինչդեռ առառանց իջնեմ պարակզ,
Կարծես խօսուն մարդերու պէս՝
Գաշա, լեռ, ծործոր աչքիս առջև
Երկնից շնորհեն օրհներգ բարեւ:

Առուակ՝ կարկառ և զեփիւս՝ սիւր,
Մեզմ գայլայլի՛ սիրուն Թաշունք,
Կազուն՝ կազ, ձագ՝ ճիւղ, մէ՛ զամներ,
Չարն՝ արձագանք, երգ տան քեզ Տէր =
Հեղաստղարթ տեքեւն սառով,

Ծաղկին հասով, պաղին համով
Քու մեծութեանդ վրկայ, Սասունձ,
Ինչպէս մանկունս շունչն անխառնուած :

Ժամանակին համար ըսեն,
Թէ քեզի կէտ մ'անգամ չ'արժեն
Հազար ու բիւր օրն ու տարին,
Ներկայն, անցեալն ու ապառնին :

Անցեալն երթայ քանի՜ բեռնով,
Եւ ներկայն զետ հով մըն է զով.
Սպազայն ալ շատ յոյս կուտայ,
Ե՞նէ սիրտս քեզ ուխտ ըլլայ :

Արարածոց մէջ ամենէն
Քեզ սիրելի Մարդն է կ'ըսեն.
Որ մաքուիւ ու խօսուն լեզուով
Միշտ կը դիմէ հանճարաց քով :

Մարդ մէկ տեսակ, բայց Ազգեր շատ'
Հայրս ըսաւ Թէ Աեզու ընին զատ,
Որոնք գառանց հօտերու պէս
Փարախներու մէջ բաժներ ետ :

Ո՛հ, իմ ազգիս անունն է Հայ,
Ես հայ եմ, իմ լեզուս ալ հայ,
Եւ մեր փարախն է Հայաստան,
Գիտես Սասունձ, Թէ սիրեմ զան :

Բերանս դեռ ծիծ դընէր մայրիկ,
Սկսայ երգել հայ — հայրենիք.
Որուն համար ծնան իմ օրեր,
Որուն լեզուով քեզ տամ նուէրներ :
Նոր տարույս, Տէր արդարապատ,

Արդեօք ինչէր ունիս պատրաստ՝
Ի շնորհ մատաղ հայ մանուկիս,
Միանգամայն սիրուն ազգիս:

Մայրիկս ըսաւ քեզի համար,
Թէ միշտ օրհնեա մարդիկն արդար.
Արքայութիւնդ տաս վարձ բարւոյն,
Եւ դրժտիքի լաց կոծ՝ չարւոյն:

Ուխտեմ քեզի՝ ամեն մարդու
Բարի ուզել ըլլալ հըլու.
Օրուան լուսոյն հետ նորոգել
Մանկութեան տրիտի սրտիս նուերներ:

Քեզ, նվ Յիսուս, միշտ սիրեմ քեզ,
Քեզ, որ զրգուես մանկտին սիրես.
Ոչ՝ հին և ոչ սա նոր տարին
Զօրեն տալ սէրս բերան հովին:

Խաչն՝ որ եղաւ մեզաց փրկանք,
Ուր դու կրեցիր վիշտ նախատանք՝
Անոր առաջ երկրպագու,
Բազկատարած տամ ալէլու:

Դեռ բառերս քիչ միտքս ալ փափուկ,
Ինչպէս շինեմ խօսք նորելուկ,
Որով սրտիս նոր ծլած թերթեր
Յուցնեմ ի նուէր քեզ, նվ իմ Տէր:


Բայց իմ վերջին մաղթանքս Աստուած,
Երջանիկ կեանք՝ իմ վեհ ծնօղաց.
Որ ինձի միշտ տանին խընամ
Բարոյական և նխաժական:


Փառք պատրաստէ՛ եւ անոնց, Տէր,

Անոնց, որ սիրաս մաքրեն թել թել
Տրգէտ մտացս ալ նորածին՝
Տան գիտութիւն—լոյս կենսածին:


Տուր արեւ, տ՛ուր, սիրուն ազգիս,
Քաղցր արշալոյս, Հայաստանիս.
Ո՛հ, խլէ մրկէ այն որոմներ,
Որ մեր սիրոյ արան են ծածկեր:

Տ՛ուր Տէր, մանկանս շատ նոր Տարի,
Որ քեզ օրհնեմ սրտով բարի.
Ծըլիմ ծաղկիմ վարդի նրման,
Տալ անուշիկ հոտ Հայութեան:





ՆՈՒՒՐ ՄԱՆԿԱՆՑ



ԱՌՍԱԶԻՆ ՈՂՁՈՅՆՔ

ՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ



Ա. ՇԱՐ

ՄԱՆԿԻԿՆ ԱՌ ՄՆՕՂՍՆ

Ա.

Սրտիկս ուրախ,
 Գէմքս ալ ծիծուղ,
 Ջեռ թռչնիկ մ'ազատ'
 Ունիմ երգեր շատ.
 Բայց լեզուիս լարեր
 Գէռ մնալ արժ տաւղեր:
 Գէթ Տարիս Նոր
 Ձեզ շնորհաւոր
 Կրնամ ըսել,
 Եւ այս իմ սէր,
 Սրտիս Նըւէր:

Բ.


Ձուարթուն ոգով յուզուած, ծնօղբ իմ,
 ՅնձուԹեանս իսկ Թարգման չ'ունիմ

Սա Նոր Տարւոյս առաջին օր,
Բայց գեղգեղանք մ'ունիմ ազուոր,
Կը սիրեմ ձեզ արտալ բոլոր :

Գ.

Եթէ չըլլար լեզուս թոթով,
Քիտէք իմ ծնօղք, ինչ երգերով
Կ'ուզէի հոս գովել
Ձեր խնամքն ու քաղցրիկ սէր,
Որ ամեն օրուան
Սրեւին նման
Յիս փայլին կենդան :

Գէթ հայրս ու մայրս լսե՞ն այսօր
Մազթանքն որդւոյն, Նոր շոյս, յոյս նոր ?
Երջանկութեամբ տարւոյն բոլոր :



Բ, ՇԱՐ

ՈՐԳԻՔ ԱՌ ԾՆՕՂՍՆ

Ա.

Ինչպէս բնութեան երգեցիկներ
Գարնան պայծառ առաւօտներ
Որն ի հովիտ, որն ի դաշտակ
Ձքնաղ ծաղկանցն ըլլան դաշնակ,
Եւ մորդ, մենք ալ եղբայր ու քոյր
Պերճ արիւոյն օրս արշաւասոյր
Մինչ դեռ փայլենք մաքրագորով,
Գեղգեղենք ձեզ շնորհուն սրտով

ՏԱՐԵՍ ԲԱՐՈՎ,

Բ.

Քայր աւերայր ձեռք ձեռքի տուած,
 Եարք մը պարու հարսդասաց,
 Չեզ' հայր մայրիկ, հագուած կապուած
 Բարի կաղանդ շնորհատ օրենք,
 Գարձեալ ձենէ, գորով խնդրենք:

Գ.

Եունչ մ'որ շնչենք այսօր, հայրիկ,
 Այն իսկ ձերն է, աչնիւ մայրիկ.
 Արդւոյ շորթն ու բիրն երկե՛րթի
 Ծնօղաց փառքին համար շարժիւ
 Մինչ մեր լուսոյ արեւմուտքին՝
 Պարար մաղթել ձեզ կհամք զուարթագին:

Ինչպէս այս նոր տաւօտուս,
 Աւր ձեր գրկին մէջ վայլենք լոյս,
 Սերախ ոգով կայտաւենք ի խանդ,
 Աղջոյն տալու՝ սիրոյ կաղանդ.
 Այսպէս եզրարքս աւետարէր
 Առնունք ձեր նոր գորովն ու սէր,

Ըլլալ օր մը կիրթ, բարեպաշտ,
 Թգտել ձեզի տարիներ շատ.
 Ըլլալ օր մը հշմարխա Հայ,
 Եւ չը բերել մեր գլխին վայ.
 Տալ մշտապէս սէր գիտութեան,
 Ար էն է ինչ որ մեր սիրտը կ'առնու:

1001
 86976



Գ. ՇԱՐ

ՈՒՍՏՐՆ ԱՌ ՀԱՅՐՆ

Ա.

Արեւիկ ծագի,
Բայց զիշեր ունի.
Ծագիկ ծլի վարդուկ,
Բայց կեանքն է փափուկ:

Լոկ զաւկիդ սերն՝ հայր խանդակամ,
Չ'ունի զիշեր ու տերեւծափ.
Ինչպէս վառուած ի գլուխ տարւոյս,
Քայ ճայնել քեզ երգով՝ յոյս, յոյս:

Բ.

Միրաս խակ ուանվարժ,
Լեզուս նորավարժ,
Քաղցրիկ հայրս ինչպէս
Այս օրս ոգեմ քեզ,
Քեզ սիրաս երախտօք
Տամ ինտէր բարւոր:

Շատ են իղձս ու ջերմ
Առ հայրն իմ վսեմ,
Որուն շուքին տակ
Ապրիմ շնորհունակ,
Ինչպէս վարդն ի ցօղ
Եւ ի լոյս շող շող:
Գէթ նոր տարուս
Երգէ լեզուս,
Կեցցես հայր
Յարևս յամայր.



Դ. ՇԱՐ

ԴՍՏՐԻԿՆ ԱՌ ՀԱՅՐՆ

Ա.

Հայրիկ, աղջիկդ ունի տաղանդ,
Որ բարեւէ բեզի Կաղանդ.

Բայց փափուկ լեզուակն արձակուած օրէն
Ուսաւ տաղ մը, հայր սիրսս ու սերսս 'ֆուկդ են .

Բ.

Տարույս տաղին
Բարեզուարն օրին

Հայր ընդունէ զիս բազկաց մէջ,
Ուր գամ տաղել, սն, սիրոյդ էջ.
Սնա սրտակեր զգացմանցս անոյշ
Ժպտախառն այտք, աչկունք մեզոյշ.
Օն, զիրիւրն զխառն ւն իմս ուղջոյն
Նւ երախտիքս ալ սնեցուն,

Ձոր բու գրկիդ մէջ ըստայայ.

Այս բեզ, հայրիկ, ազգիանդ ընծայ:

Ե. ՇԱՐ

ՄԱՆԿԻՅՆ ԱՌ ՄԱՅԻՆ

Ա.

Մայր, ես սոխակն եմ սիրարուն,

Որ նախերգէ ելքն արեւուն.

Եւ զեփիւռին խառնած դաշներ,

Արձազանք տայ մինչ տանց դռներ:

Ո՛վ չախոբժիր արդեօք լսել

Սէր, սիրա շարժող եղանակներ:

Մայրիկ, մանկիկս ուրախ ուզուարժ

Ինչպէ՞ս չ'երգեմ այսօր Ասղանդ,

Որ մեզ բերէ կենաց բարեւ,

Հապա մազթեմ շա՛ս պերճ արեւ.

Բ.

Նոր Տարւոյս համար

Ես որդեակդ, ո՛վ մայր,

Շատ խօսք դիզեցի

Լեզուակիս վըրայ,

Վեր վար վազեցի՝

Քեզ բերել ընծայ:

Բայց ըմբռնումս որ խիստ արկար,

Հազիւ պահեց սա երեք բառ,

Մայր, սիրեմ քեզ,

Գու խ սիրեն,

— Այն, այն:

Զ. ՇԱՐ

ԳՈՒՍՏԵՐՆ ԱՌ ՄԱՅԵՐՆ

Ա.

Աղջիկդ անն, մայր սիրատու,
Փռածայ երգել լեզուովն այժմու,
Շնորհաւոր օր ու Տարի նոր,
Ընդունէ իմ սիրելի մայր,
Թռռուն ոգոյս ձօնիկն արդար,
Բարեացապարտ սրտիս' — փնռք մօր:

Բ.

Բնոյ գորովոյ զիրկդ, ազնիւ մայր,
Ուր գայ դատրիկդ արշաւասոյր'
Տալ կամենատու ձեռքիդ համբոյր,
Լսէ հեզիկ ազաւնւոյդ ձայն,
Շնորհաց սրտին ան նուէրն յայս ժամ,
Բարւոյ Կաղանկ, կեանք անքառաւ.
Հոնգչիմ ի խինդ, մայր, սիրուդ բոյն,
Ուր ստացայ սա Հայ լեզուն'
Օրհնեքգել քեզ տարին ի բուն:



Է. ՇԱՐ

ԵՂԲԱՅԵՐ ԱՌ ԵՂԲԱՅԵՐ

Ա.

Հորիզոնէն վեր ծլծլաց արշալոյս,
Պերճ էր երևոյծն ու նոր լոյսն ու յոյս,
Հնչեց հրաւիրակն արձնուծեան՝ զանգակ,

Տեսայ խայտան պարք եղբարց քաղցրերգակ,
Սնդում դէմքով համբոյր փոխեն,
Եւ ներդաշնակ նոր Օրն երգեն:

Հոն ել արեւ նոր մեղոյշ աչիկով,
Վառփռուն մանկան պէս խնձղար ի հովով:
Շնչեց սէրուսիրտ զարնայնի ծոցէն,
Բերելով մեզի յոյս ծաղկանց օրէն:

Ուր ես փութացի՛
Սիրելի եղբայր,
Քեզի ողջոյն տալ
Շնորհաւոր սարի.

Հապա չ'արժեր որ համբոյր
Տանք իրարու անհրապոյր:

Բ.

Ի ծով դիմեն զետն ու վրտակ,
Վազմեն հոսանք կամ իւր կայլակ,
Եւ յանհուն ծով ժամանակին
Միշտ խառնի ժամն, օրն ու տարին:

Դեռ պահ մ'առաջ մեծ հոսանք մ'ալ
Անցելոց մէջ վազեց դարձեալ.
Տէրն չը թողուց բայց յուսահատ,
Տալով մեզ Նոր Տարւոյ Կաղանդ.

Տալով ինձի և քեզ՝ եղբայր,
Ողջամբ շնորհել սիրոյ ձեռք մ'ալ.
Ուր չը կայ սէր ի սիրտ եղբօր,
Հոն թշուառ չէ՞ մարդն ամեն օր:

Ո՛հ, կը սիրեմ եղբայրս՝ սիրտս է,
Թէն հեռի հայրենիքէ.
Հայրենիքէն այն վեհափառ,
Որ մեր սիրոյն հզնի թշուառ:

Սնցնին օրեր, բայց ունին մեր
Հայ աշխարհին յիշատակներ,
Այն դարերէն մընայ բաժին,
Որ փառք ցուցին օտար սղզին:

Հայոց անցեալն արիւնամոր,
Բայց ոչ տարւոյս առաջին օր.
Եւ սոսկ յոյս կայ ապագայէն,
Թէ որ եղբարք իրար սիրեն:

Ուրեմն եղբայր իմ անուշիկ՝
Գիրկ ընդ խառն տանք առնենք պաշիկ
Սիրոյ դաշամբ եւ նոր ճարւոյս,
Ուրկէ ծագի հէք հայուն լոյս:





Ը. ՇԱՐ

ՔՈՅՐ ԱՌ ՔՈՅՐ

Ա.

Արևելքին ուարևմուտքին
Քեզ առնձեր զտնեմ քոյր իմ,
Քեզ՝ հարազատ, սրտիս ընկեր,
Կըցորդ արեանս և իսկ իմ սէր,
Ձերթ զոյգ մ'ազաւնեակ,
Կենայն ի վանդակ:

Ինչպէս դարձեալ ի գլուխ տարւոյս
Իրարու բով, ուր սիրայոյզ
Սե զուարթերես զամ ի համբոյր,
Քեզ բարևել նոր Օր, նմ քոյր:

Բ.

Ինչ՞ են երկու սիրասուն քոյր,
Պարկեշտութեան զոյգ մ'օրինակ,
Պերճ գիշերուան շողք լուսամտոյր,
Ծնօղայց փառքին վառ արբանեակ:

Երջանկութեան է նուէր օրն այն ,
Ուր հարազատք սիրեն իրար .
Սաղաղութեան՝ այն օժևան ,
Ուր միտքան են քոյր ուեղբար :
Երջանիկ էմ ուրեմն այսօր ,
Ուր թև ի թև քեզ աւետեմ
Սիրոյ Կաղանդ ու Տարի Նոր
Չօն մ'ալ , — արև քեզ անընտեմ :

Գ .

Ժամուց Տէրն արդ՝ ճննն տայ քոյր ,
Նորոգել մեր սուրբ ուխտեր .
Սկնւր հաղա , ի համբոյր
Երգենք Տարիս շնորհարեր ,
Նոր սեր , Նոր Օր կենսարեր :





Թ. ՇԱՐ

ԵՂԲԱՅՐ ԱՌ ՔՈՅՐ

ԿԱՍ

ՔՈՅՐ ԱՌ ԵՂԲԱՅՐ

Ա.

Կեանք է ինձ, սին, սրտէս
Անուանել « Եղբայր » քեզ .
Քաղցր է ինձ ' քեզ այսօր
Ողջունել Տարի նոր .

Արժանի չենք շնորհաց
Քոյր ու եղբայր զուգընթաց
Եղբայրս է սրտիս թել,
Ով՞ հրնայ զայն հարել :

Ազնիւդ իմ ձեռքդ օն տուր ,
Ինըշան սիրոյդ լուռ .
Եւ ըսէ՛ հարազատ ,
Կը սիրեմ քոյրս ի խանդ .
— Կը սիրեմ :

Ապրի իմս եղբայր ,
Բարու թեամբ հազար :

Բ.

Որդին հօր մօր , եղբայրն եղբօր
Երգէ այսօր՝ Լոյս շնորհաւոր .
Քու եղբայրդ ալ, քոյր բարեմոյն ,
Արդ փութայ տալ քեզ նոյն ողջոյն .


Ողջոյն մ'որուն նորոգ ժամեր
Մեզ խոստանան փառաց դարեր ,
Եթէ ուխտենք ի մի հաւատ
Գարձեալ սիրոյ մէջ կալ հաստատ ,

Յայն սէր անուշ , որ բանի դար
Հայ սրտին մէջ գարձաւ երշդ սառ .
Հայն և այսօր մինչ չուսասկան ,
Գարձեալ արկար սէրն ազգութեան :

Հայն , որ երբեմն ինչ փառաւոր ,
Ստրուկ գերի կարծես այսօր .
Այս և այն ազգ , որ ինք գիտէ ,
Թէ զժառութեամբ վար գլորած է :

Արդ բոյր , ոչ այս Հայուն տարին ,
Տուր ձեռքդ , ողբանք , ճայն տանք էին'
Փալախ Հայոց ու մեզ , բոյր իմ .
Չ'ապրինք արխար այլ խնդագին :





Ժ. ՇԱՐ

ԲԱՐԵՆԱՄ ԱՌ ԲԱՐԵՆԱՄ

Ա .

Կազանդն եկաւ բարեկամ,
Եկուր համբոյր մ'առ այտէս,
Յնծուծեաճա ճայն մ'ալ սրտէս,
Յաւն ու կսկիծ տես ինչպէս'
Է՛՛, խոյս ասն հոն միտկամ:
Սէր իմ, սիրտ իմ անտըխեզ՛,
Այդ ինչ ժողիտ զուարթագէմ,
Հայ սրտի մը երջող սրտակեր .
Մեզըր կամէ թս շրժնէն,
Այն ինչ երգէ սէրս անկեզ՛:
Նայէ՛ աւուրս առաւօտ'
Արշալուսով շողշողուն
Գուռ բանայ մեր նոր սրտին ,

Քեանել հոն սէր — միտւած իւն,
Որուն Հայ փառք էն կարօտ :
Իիւսել կ'ուզէ դասինէ պսակ,
Թէ որ տարւոյս հետ բարով -
Իրար վարժենք օրինաց .
Իիւսել մեր սիրան օրէնքով'
Նըշան Հայուն փառունակ ,
Հայրենակից , ձեռքդ օճաւոր ,
Սուսք երթանք , օրն է ուշ .
Յանուն ազգիս պատուական
Ուխտենք միմեանց սէր անուշ ,
Յերբ երկնից ձայն մեզ զանխուլ :

Բ .

Սէրն անխափ է կ'ըսեն ընկեր ,
Թէ ճշմարիտ' չը մեղանչեր .
Որուն նեկտարն այն ինչ ժամ էր'
Քաղցր զգացմամբ ինծի տուիր նուէր :
Նոյն բաժակով , աքդ բարեկամ ,
Քեզ նոր Տարւոյ ողջոյն տալ զամ .
Գարձեալ սիրոյ ձեռք , սիրելիս ,
Յօգուտ մեզ և պանդուխտ ազգիս :

Գ .

Սա նոր Տարին ալ' ողջանդամ
Զբարեւեմ քեզ , բարեկամ .
Նե ինչ է օրն այս կարճնովին ,
Զուարթ վայրիկ մը դիւրեզծ կեանքին ,
Որուն չքնաղ ծագմանն առաջ
Նղբարք ս' տան միտւեան աջ :
Թշուառուեան կեղրոնն անգամ

Երջանիկ միշտ այն բարեկամ,
Ուր չորսն ու հինգ մէկ սիրտ մէկ անձ,
Օրհնեն արևն և Հայրենեաց .
Շղթաներու ներքև մրմունջ
Կեանքի հայրենեաց տան վերջին շունչ :

Մէկտեղ Հայոց դարերուն
Չայնեն տունուլ արժնութիւն .
Մէկ տեղ երգեն ողբական ,
Անէծք տալով վատութեան ,
Որ Հայուն նեան ի սև ներկեց ,
Բայց զայն մաքրէ մեր սէրն անկեղծ :

Գ .

Ինչ՞ է աշխարհս զարդարուն ,

— Բարեկամաց միութիւն :

Ո՞ր գին ունի սիրտ վրախա

Բարեկամին նշմարիտ :

Անգոր է քրնաք ,

Այն մեծ փառք կարդալ :

Բարեկամ իմ ողջամիտ ,

Անոյշ խունկ մ'է քու ոգիդ ,

Որուն բուրման հետ յերկին

Մըխեն մաղթանք երկոքին :

Չոյգ մը բարեկամ ,

Մաղկունք տիրախնամ :

Քարծիր արդ յիս ի համբոյր ,

Հրճուին մեր սիրտք լուսամտոյր .

Չեռք տանք և նոր ճարուոյս հետ

Մեր սէրն պնեն ի համահետ ,

Որ դեռ շատ կաղանկ

Ապրինք ջերմեռանդ :



ԺԱ. ՇԱՐ

ԱՇԱԿԵՐՏ ԱՌ ԳԱՍՏԻԱՐԱԿ

Ա.

Զգացմանս ուր աշտօր ընդունիմ Թարգման.
 Լեզուս, որ անվարժ հեզել երկու ձան,
 Գրիչս, որ դեռ կաղ զեա տրնաս մանկիկ,
 Անկարող զրծել այն շնորհքն անուշիկ,
 Որ օրուան լուսոյն հեա առնում քե՛նէ,
 Ինչ՞ ունիմ փոխան, ըսել՝ ընդունէ:
 Որչափ եւ անցնի ժամանակն աշտօլէս,
 Ինչպէս սրան մ'առաջ շրջանն աւարտեց՝
 Ատասիկ եւ նորն սկսաւ բարեփառ՝
 Այնչափ ծանրամամ ես սղարաւոց ի շար:

Բայց ընդունէ, սի որ աշխարհի մէջ
Միշտ հովուես մանկտին գառանց հօտին պէս,
Չայնիկս ընդունէ, որ խօսիմ սքտէս,
Նւ մինչ ի շիրիմ պարտիմ օրհնել քեզ,
Ընդունէ երգս իմ ՆՈՐ ՏԱՐԻ, ՆՈՐ ՕՐ
Չարժեր մաղթել քեզ եւ կեանքս մնայլատար:

Բ.

Երբ որ ծաղկի գարնանս պարտէզ
Նլնէ ի սար և վեհ պաշտէս
Քաջ վրձինովն ասնու ի գիր
Քողարիկ շնուծեան չքնազ սեփիւ
Բայց սէր ինձի համար այն ձեռք,
Շարագրել տալ ձեզ փառաց երգ,
Կրնամ գովել այն արեւ լատ,
Որ փառեց սիրտս փառաց համար:
Դուք որ մանկաւոյն մըտաց լոյսն էք,
Նւ մարդկուծեան քաղցր յայն ու դէկ,
Ճարտարանուագ Մուսայն անգամ
Չօրէ՞ շարել ձեզ երգ մ'արժան:
Կենդանայնէք դուք այն փառքեր,
Չորս հայրենի շիրիմք ծածկեր,
Ձեր գրիչն օրէնք հանաւր ազգաց,
Թագ, գաւազան Թագաւորաց:
Արդ, ինչ արժէ մրմունջ մ'իգով,
Երբ արդի մը Թըրքաւա լեզուով
Բարեւէ Նոր Տարւոյ ժամեր,
Ուր ձեզ պատրաստ են շատ փառքեր:
Բայց լսէ այն մեղմ ձայնն սի Տէր,
Աշակերտից աւաճեալներ,

Որ դիմէ քեզ ուրախ սգում
Եւ երախտեաց անկեղծ նուէրով:

Գ.

Սյն օրն ուր դուք՝ նվ ուսուցիչ,
Ձեռքըս տուիր թուզթ ու գրբիչ.
Սյն օրն ուր դուք մատաղ լեզուիս
Հնչել տուիր ուխտն իմ սրտիս՝
Աստուած ու Սէր քաղցր Հայրենիք
Բարոյական դասուց մեծ գիրք՝

Երբ կարգացի ու առի լոյս,
Երջանկութեանս երեցաւ յոյս,
Սյն օրն ձեզի՝ նվ խնամածուս,
Նըւիրեցի սիրտս ու լեզուս,
Ձեռք ստացած գրչաւս ազուոր՝
Դրուագել ձեզ սարի և օր:

Արդ մեռաք, հրճուանք, որ զամ սիրով
Մանուկ գրչիս տողիկներով
Շնորհաւորել ձեզի Կաղանդ,
Սյս նուէր սրտիս իմ ջերմեամսդ.
Քնդունեցէք զերթ խունկ անոյշ,
Ձեր աշկերտին ձօնիկն աշխոյժ:





Ժ.Բ. ՇԱՐ

ԱՇԱԿԵՐՏՈՒՂԻՆ ԱՌ ԴԱՍՏԻԱՐԱԿՆ

Ա.

Ես թիթեռնիկն եմ այն թռնուռն,
Որ հովահար թևով սիրուն՝
Գառնայ ի թափօր
Վարդենայն բոլոր,

Որուն կողոնք, թերթեր քնքուշ
Սփռեն իր շուրջ հոտիկ մ' անուշ:
Թռնայ թիթեռնիկ,
Բայց երգն է լըռիկ:

Ես զերթ թռնուռն այն թիթեռնիկ
Թեւերս յողջոյն խեղճ ձայնիկ՝
Գամ թռնալ այն ծաղկին վրան,
Ուր կան բուրմունք իմաստութեան:

Տէս, թռնայ աղջիկ,
Երգերն չեն լըռիկ.
Ինչպէս ձեզ այսօր
Տարի շնորհաւոր:

Բ.

Օրնայ սնանիմ ծնողայ քով,
Հոն վայլեմ սէր ու գորով.
Տէր Աստուածն իս յանձնած էր
Հօր մօր սրտից որդեսէր:

Նրբոր շրժունքս երկթերթի
Թողին լեզուս որ խօսի,
Ձեռնէս բռնած իմս հայրիկ,
Յանձնեց խնամոցդ երջանիկ:
Այս քեզ, ըսաւ, հանչցիր արդ,
Ուսուց՛իւ, թէ ինչ է մարդ,
Ինչ՞ են երկիրս ու երկինք՝
Ձոր միշտ տեսնես նով աղջիկ:

Եւ դու նով այր խնաստուն,
Ուսուցիր ինձ օրն ի բուն՝
Հաւատք, յոյս, սէր, գործ բարի,
Միշտ չը տալ սիրտս և չարի:
Լոկ ուսմունքներն, միշտ ըսես,
Առաքինի ընեն մեզ.
Իսոր ուսմանց և գիտութեանց
Չարդք աղջկան, սանց չարութեանց:

Ուսմունք այն, լոկ դարման
Մըտաց ախտին բընական.
Վատ այն մարդն ու ամբարիշտ,
Որ յարգ չըտայ ձեզ՝ այլ վիշտ:
Հայ օրիորդն երջանիկ,
Որուն բաշխէք ուսմանց գիրք.
Արդ, ինչ վայլէ քեզի նուէր,
Զի քիչ ոսկի արձաններ:

Սիրտ մը, զոր միշտ կը մաքրես,
Լեզու մը, զոր նորոգես,
Ողջունիւ նոր Տարւոյս Տէր,
Անոնք ըլխան քեզի նուէր:

ԺԳ. ՇԱՐ

ՊԱՍՏԻԱՐԱԿՆ ԱՌ ԱՇԱԿԵՐՏՆ

Ա.

Հրճուէ մանկիկ դու սիրուն,
Ձի նոր է սէրդ և օրս նոր.
Երգէ այս օրն զըւարթուն,
Որ տայ յոյս, լոյս փառաւոր:

Եղբարցրդ համայն
Ըսէ հրճուածայն,
Քեզգեղեմ ի խաղ
Նոր Տարիս խաղաղ,
Գործոյ ժամանակ,
Օն շանք շարունակ:

Բ.

Քաղցր զգացմանց դէմքրդ Թարգման,
Նշգրիտ պատկեր ուրախութեան.
Որով արդ զուարճ գիտես ինձի,
Շնորհաւորել նոր օր Տարի:
Նոյնն և ես քեզ՝ աշկերտ խոհեմ,
Բայց բարութեանդ օգտել մաղթեմ.
Ձոր Թէ շահիս աշխատութեամբ,
Երջանկանաս իմաստութեամբ:

Ք.

Մընընդեան օրեղ
Մինչ յայս ժամակէ, տ'
Երբ լեզու ելար,
Խօսիլ ըսկըսար,
Քանի հեղ ըսիր'
Հինցաւ աս տարին,
Նոր տարին եկաւ.
— Այո՛, գայ բարեաւ :
Նորոզի տարին,
Նոր սէր գայ սրտին.
Ահա եւ քեզի
Մէկ նորոզ Տարի,
Բայց շատ չը տեւեր,
Աս Երբ տւարտեր
Կ'ըսես ճիշդ նոյնպէս,
Անցնի հովի պէս :
Գու թէ հիմնալուծ
Եւ թէ նորելուն,
Չըլլայ քեզ խաբէս,
Միշտ ծանիր ըզֆեզ.
Ճամբայ մ'է կ'անցնիս,
Մինչեւ տեղդ հասնիս,
Նայէ որ քարին
Ոտքերդ չը զարնուին :
Քրտանց կամ իլներ,
Երբէք մի՛ խնայեր.
Աշխատութիւն, — կեանք,
Մուլութիւն, — ամեն զանք :
Երբոր չես վատներ

Մանկութեանդ օրեր,
Ըլլաս երջանիկ,
Թէ հոս թէ երկինք:
Քանի քանիներ
Վախով են անցեր՝
Չ'ընտրելով ընկեր
Արթուն, ջանասէր:
Կռնակը բարձին
Կրթութեանդ որդին՝
Ետքէն ալ քարի
Կը զարնէ կ'ըսուի
Հիմայ աշխատիս,
— Ետքն անշուշտ հանգչիս.
Միտքըդ մըշակէ՞ս,
— Պըտուղն ալ քաղես.
Հիմայ հնազանդ ես,
— Հընազանդեցնես.
Մինչդեռ մանուկ ես,
Լեզուիդ չափ դընես.
Ապրէ սուրբ սրտով,
Հաւատով Յուսով.
Հեզութիւն պանծայ
Միշտ դէմքիդ վըրայ:
Հնազանդն ծնողաց,
Է և Օրինաց.
Սէր նախ առ Աստուած.
Աղգըդ չը մոռնաս
Վերջապէս ո՞վ Հայ,
Չը գայ գլխուդ վայ,
Մընալով տգէտ,

Ապրելովդ ումպէտ:
Նոր տարուէ տարի՝
Գու յոյսըդ բարի՝
Ջանա՛ նորոգել
Ու չը հինցընել:
Տարւոյս առաջին
Օրէն նորոգուին
Ջանքերդ մանկական՝
Ոգւով Հայութեան:
Գեռ այս հասակիս՝
Մաղթեմ պրտակուիս
Առաքինութեամբ
Եւ իմաստութեամբ:



ԺԴ. ՇԱՐ

ԱՌ ԲԱՐԵՐԱՐՍ

Ա .

Ձեր անձնանուէր
Մանկիկն, ով տէր,
Յնժուն սրտով,
Լեզուաւ թոթով
Փութայ երգել
Ձեզ Նոր ժամեր.
Զի նոր տարւոյս
Հետ ալ շատ յոյս
Տայ ինձ երկիկնք,
Փառօք ապրիք:

Եւ այն փառքով, զոր տէր Աստուած

Բարևոյն է լոկ յատկացուցած.
Այն բարեսիրտ, այո, մարդկան,
Որ թշուառին եղած պաշտպան,
Չը թողուր կալ անմըխիթար,
Ինչպէս դուք զիս, ով բարերար:

Բ.

Ես այն ծաղիկն եմ գարնայնի,
Ձոր պատած են եղինճն ու փուշ.
Ես այն դժբաղդն եմ յաշխարհի,
Որոյ ծնունդ դառն ու կեանքն անուշ:

Ես այն ծաղիկն եմ գարնայնի,
Յոր ձեր խնամոց պերճ արեգակ
Մազեցաւ, շողն է պանծալի:

Արդ չ'անրժեր, Տէր, ի զլուխ տարւոյս,
Ուր ձեր բաղկին տակ գայ ինձ լոյս,
Ողջունելով նոր Տարւոյ օր'
Մաղթեմ ձեզի կեանք փառաւոր:

Գ.

Այն օրն, ուր ձեր սիրտ բարերար
Մանուկ որբիս եղաւ պաշտպան,
Այն օրն սրտիս թերթին վրան
Կնքելով իմ պարտքերս արդար,
Երախտապարտ որդեգրեցայ,
Սոսկ խիղճըս քեզ անա վրկայ:

Ամեն առտու քեզի համար
Ձայնիկս յերկին կեանք կը մաղթեմ.
Ամեն օր տէր, քեզի ուխտեմ
Սիրտս ու լեզուս ընծայատար.

Որով բարեւ տալ զամ այսօր,
Բարի Կաղանդ եւ Տարի նոր:

Գ.

Երախտապարտ սիրտ մը, ով տէր,
Կրնայ տրղեկ մը բացատրել,
Որուն դուք հայր, մայր, բարերար,
Ինչ՞ տայ այսօր ի ձօն արդար:


Ինչ՞ կրնայ տալ այն, որ եւ ձեր
Պրթոց շուքովն է պահպանուեր.
Եւ իր կենացն օրեր քաղցրիկ
Ձեզի պարտի, պարտք անկեղծիկ,

Որ գերթ աստղիկ միշտ փայլի յիս,
Եւ կարծես փառք ծագէ սրտիս
Բայց սա զօրէ թոթովել, Տէր,
Սիրեմ ես ձեզ շատ սարիներ.





ՆՈՒՆԻ ՄԱՆԿԱՆՑ



ԵՐԿՐՈՐԴ ՈՂՋՈՅՆՔ

ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ



Ա. ՇԱՐ

ՈՐԴԵԱԿՆ ԱՌ ՀԱՅՐՆ

Ա.

Տարեդարձի տօնիդ հայր իմ,
Հասած ողջամբ և զուարթագին,
Ինչպէս ամեն օր,
Անանկ ալ այսօր

Ես մտղթեմ առ Տէր զըթուծեան,
Շնորհել քեզ կեանք տեւողակամ:
Հայր ընդունէ,
Սրտիս փոքրիկ

Սիրոյն զոգտրիկ
Այս պատկերն է,
Զոր քեզ տամ ի նուէր,
Հայրիկ որդեսէր:

Բ.

Ինչ՛ երջանիկ ինձ այս ժամեր,
Որ հօր կենաց ծագեն արեւ,
Ինչ՛ երջանիկ այն դաւակներ,
Որ առնուծ պերճ աւուր բարեւ:
Որդեակդ հապա, հայր, զայ յատեան՝
Երգել անուանդ այս սարեղարձ:
Ինչպէս՞, — որդւոյ պարտուքն արժան:
Տեսնեմ ձեզ շատ յարեւադարձ:

Գ.

Կայ այսօր իմ վեհ ըղձացմանց Թարգման,
Ով պիտի երգիս տայ դաշներ արժան,
Որ տօնախմբեմ տարեղարձն անուան
Իմ հօրս սիրելի, ով օր պատուարժան:
Զուգեմ որ ոչ ոք ելնէ ի հանդէս,
Ես սրտիկ մ'ունիմ ուխտերուս բարվառ,
Եւ լեզու մ'ունիմ որ խօսի ներսէս,
Զուգեմ ինձ Թարգման այս աւուր համար:
Ընդունի հայրս իմ փոքրիկ ձօն,
Տարեղարձի շնորհաւոր տօն:





Բ. ՇԱՐ

ՈՐԳԵԱՎՆ ԱՌ ՄԱՅՐՆ

Ա.

Տեսնե՞ս իս մայրիկ,
Որ եմ դեռ փոքրիկ.
Ձը գիտեմ ինչ է անուանն Տոն:
Երգել ուզեմ ուստասելով,
Եւ ձեզ շնորհել ջերմ ըղձիս ձօն՝
Վարդ այտերուս պաշխիկներով,
Մեծ է սէրս մայրիկ,
Թէև ես պզտիկ
Դու որ երջամիկ
Ընես իս մայրիկ,


Ուրախ աստիճ ծաղիկ ծողվեմ,
Որ մէկ օրուան կեանքն ու իր սէրն
Նժէ հաճիս, գողտր ու վրսեմ
Փունջիկ մ'ունիմ քեզի նըւէր,
Սրտիկ մը մանրիկ
Անմեղ, ով մայրիկ :


Բ.

Սերելի մայր,
Դեռ մանկութիւնս այս չը ներեր'
Ուրախութիւնս յայտնել այսօր .
Լեզուս դեռ Տօնդ զովել անդօր,
Բայց քեզ սիրտս գիտէ սիրել .
Ընդունէ մայր :

Գ.

Մայր, ահա ճիշդ այն օր,
Որ սրտիս տայ աշխոյժ .
Այս այն ժամ զլխաւոր,
Որ լեզուիս ազդէ ոյժ :
Թէպէտ և անկարող
Հասակով ու մտքով,
Բայց ո՞վ կայ թարգմանող
Քեզ իմ սէրս, քոյդ զորով :
Սայտամ տոտամբ յոլոր ոլոր,
Ըսեմ, մայր, Տօնդ շրնորհաւոր .
Չըտեսնելով ցաւոց օրեր,
Ապրիս անվիշտ տարեդարձներ :





Գ. ՇԱՐ

ԱՌ ԵՂԲԱՅՐ

Ա.

Քեզ չը սիրեմ ո՞վ սիրեմ
Նղբայր, քեզ՝ որ արիւնս ես,
Օրօրոցիս իմ ընկեր,
Ինչ՞ երգ կարդամ և ինչպէս,
Շնորհաւորել տօնդ վրսեմ:
Նղբայր իմ, քեզ միշտ սիրեմ,
Անկեղծ սիրովս և այսօր
Հրճուիմ, պարեմ, քեզ փարիմ,
Օն ձեռք, համբոյր քաղցրաւոր,
Արև սրտիս աննրսեմ:
Քեզ չը սիրեմ ո՞վ սիրեմ,
Նրկինք շնորհեց ինձ այս սէր,
Այս սէր՝ զոր դու կրրես ճիշդ,
Չունիմ այլ ինչ քեզի նուէր,
Բայց սիրաս և սէրս որ քաղցր էն:

Քաղցր և ինձ մաղթել Տարեդարձ Տօն շատ
Սալիմք անբաժան, եղբայր հարազատ:

Ք.

Դժգոյն ամպեր ծածկեն զարև,
Մըշուշ տեղայ երկրի վերև,
Փնտի պըտուղ, Թօշնի ծաղիկ,
Սաղաղ ծովն ալ ունի ալիք:
Բայց իմ սէրս, եղբար,
Միշտ ջերմ ու փայլուն.
Սիրտս արթուն, արդար,
Երազեմ միշտ քեզ
Ով՞ վրկայ բերեմ,
Թէ որչափ քեզ սիրեմ:

Երբ տխրութիւն պատէ յոգիս,
Քեզ մըխիմար գոչեմ ցաւիս.
Եւ մինչ սիրենք իրար, եղբայր,
Որչափ հրճուին մեր հայրն ու մայր:
Ճրռուողէ սոխակ,
Սիրոյս է երգակ.
Փըչէ սէրուսիրտ,
Զովանայ իմ սիրտ.
Սայտամ գառան պէս,
Սէրս առնու ոգի,
Եւ դիմեմ միշտ քեզի:

Ինչպէս այսօր անուան տօնիդ,
Վառած նոյն սէրն իմ փափուկ սիրտ,
Փռեմամ Զօնիւ շնորհաւարե՛լ
Փառք գոհութիւն տալով առ Տէր.
Առ Տէր, ի՞նչ եղբայր,
Որ մեր սիրան ու սէր
Սնամէ անդադար,
Այսպէս շատ օրեր
Իրար համբարել
Եւ երգել եղբօր սէր:

Հոն, ուր առած էնք, ո՛հ , ծընունդ,
Հոն, ուր այսօր վայլենք սընունդ :
Մեր կեանք ու փառք— ծնօղաց զորով,
Յժէ հնազանդ ըլլանք սիրով.

Այս երկնից պատուէր,
Այս պարտք տիրանուէր
Եղբարց, ով իմ սէր :



Դ. ՇԱՐ

ԱՌ ՔՈՅՐ

Երբ աչքս յեծեր զարձուենմ,
Թռչնոց խումբեր կը տեսնեմ
Մէկտեղ ճըլուլան ու պարեն,
Սրտիս նախանձ մ'ալ ազդեն :

Երբոր նայիմ իմ չորս դին,
Զքնաղ ծաղկունք պարտիզին
Տեսք մ'իմձ զուցնեն զուարթերես,
Իզձ մը կորզեն ճիշդ սրտէս՝

Միժէ անոնք՝ քոյր անկեղծ,
Ինձ սիրուն են քան ըզքեզ.
Միշտ ջերմ է սէրս քու համար՝
Զոր շնորհեր ինձ Տէրն արգար՝

Այն սէրն է՝ քոյր սիրական,
Արով ելնեմ արդ յառեան,
Սրտիս ու խառով տօնելու,
Անուանդ սրտն՝ զան յալէլու.

Շատ տարեդարձներ նոյնն երգեմ ի սէր:



Ե. ՇԱՐ


ԱՌ ՄՕՐԱՔՈՅՐ ԿԱՄ ԱՌ ՀՕՐԱՔՈՅՐ

Գիտեմ, ազնիւ Մօրաբոյր,
Քանի անուշ յիշատակ
Գրաւեն սիրտդ արդ հոյլ ի հոյլ,
Անցեալն է քեզ փառունակ:

Յընծայ հոգիդ սա ժամին,
Ուր գողտր անուանդ տարեդարձ
Տայ նոր կենաց յոյս, — բարին,
Երկնից այս շնորհ անդրադարձ:

Պէտք է երգեմ, մօրաբոյր,
Քաղցր և այս օրն իմ համար,
Ուր զերթ ծաղիկ գեղաբոյր
Բերեմ քեզ ճիւղ մը դալար:

Քեզ կոչելով երկրորդ մայր,
Գամ ողջունել անուանդ սօն,
Մաղթել սրտիւ կեանք յամայր,
Այս իմ քիչ բայց անկեղծ ձօն:



Զ. ՇԱՐ

ԱՌ ՀՕՐԵՂԲԱՅՐԿԱՄ ԱՌ ՄՕՐԵՂԲԱՅՐ

Զիս բարեբաստ համարէի,
 Ինչ որ զգայ սրտիկս այս տեղ՝
 Թէ բացատրել զէթ զիտնայի
 Այսօր, այսօր և ճիշդ այս հեղ:
 Այո, ծընօղբս ինձ ուսուցին՝
 Ինչ որ պարտիմ միշտ ձեր համար.
 Զի մանկութիւնս իմ կամոգին
 Քրգուած սիրած էք հայրաբար:
 Ուրեմն ի պար ելնեմ այժմիկ,
 Զի ձեր ներկայ ցնծութենէն
 Ես ալ ունիմ հաւսար բաժնիկ,
 Պատրաստ երգի տողիկս արդէն:
 Այո, ըսեմ հօր եղբայր իմ,
 Շնորհաւոր soli և բարի օր.
 Կեանքդ ըլլայ յար ու խնդագին,
 Ուր միշտ պարծիմ ես փառաւոր:

Է. ՇԱՐ

ԱՌ ՊԱՇՏՊԱՆՍ

Ա.

Ով դու լեզու մանկական,
 Մընաս դեռ լուռ տևական.
 Եւ դու սիրտ իմ տիրաւէր,
 Յերբ անդաշնակ ուանտարբեր:
 Այս պատեհ ժամ ցնծութեան,
 Տաւղիկ քնարիկ ուր ձեր ձան,
 Երգել վեհիս ազնուական
 Տարեդարձի soli սնունան:
 Բարեպապարտ սիրտ, լեզու,
 Օն, կարդայէք ալէլու.

Դուք յարմար փոքր հասակիս
Արժանի նուէր պաշտպանիս :
Երախտեացս իմ դուք նըշան ,
Քաղցր զգացմանցրս Թարգման .
Արդ օրհնեցէք այն ձեռներ ,
Որ միշտ խնամեն ձեզ ի սէր :
Փչէ զեփիւռ , յիս ժաման ,
Պատրաստի ձայնս օրհնութեան՝
Եկուր , սի տար յերկինս վեր
Ուր համայնից բազմի Տէր :
Այս են մաղթանքս՝ ինչպէս միշտ
Բարերարիս կեանք անվիշտ
Շնորհել . դեռ շատ աստուծոյ
Կեցցէ իմ վեհ խնամածու :

Բ .

Ոգիս իսէրս Թռնաց այսօր ,
Երբ լուր մ'առի՝ զուարթ Երեսով
Փութացի , ով իմ բարերար ,
Չեռացդ համբոյր տալ , երգելով
Տարեդարձիդ տեղ շնորհաւոր .
Հերիք սեպեմ , այսքանն ով Տէր ,
Չեզ , որ սրտիս փառքն էք և յոյս .
Ինծի յարմար ժամ մը չէ՞ այս՝
Ուր յիս փայլի շնորհացըդ լոյս ,
Տալ ձեզի՝ բայց և ինչպէս նուէր ,
— Սիրտ մ' ինքնանուէր :

Ը . ՇԱՐ

ՅՕՐ ՍՈՒՐՐ ԾՆՆԴԵԱՆ

Կազանդն եկաւ բարիքով ,
Գրպանս լեցաւ նուէրներով .
Շնորհաւոր օր ըսելով ,
Ճարս հասաւ ձեռք սրագնելով .
Կարծէի Թէ կազանդ օրեր՝
Արեւն երբէք մայր չը մտնէր :

Ո՛հ, իրիկունն հասաւ շուտ,
Գրպանս պարագ, բայց փոքրս կուշտ.
Գրլուխս ծրամ զառկեցայ,
Տրխուր քուն մը քընացայ
Մէյ մ'ալ տեսնեմ որ նոր արև
Ծագեր կանուխ զլխիս վերև
Թէև սիրաս կազանդուան
Փառքէն զուրկ էր, որ անցան.
Օրացոյցին միւս երես
Գարձուցի, ինչ տեսնեմ ես.
Ծրնունդ Տեառն վերոյ Փրկչի,
Երկու օր ալ կայ կիրակի
Վեր վազեցի վար իջայ,
Մինչ այն օրուան ալ հասայ,
Կանուխ ելայ անկողնէս,
Իղձ մ'ալ ծընաւ հոն սրտէս
Նոր հագուածներս հագուած սգուած,
Ժամ վազեցի լապտերս վառած :
Գարձայ ի տուն խնդումով,
Համբոյրով ու բարևով,
Աւետեցի Ծնունդ հօր մօր,
Բարեկամացս ալ բոլոր.
Հոն սկսայ երգել նոր եղանակներ,
Որ Հայաստանիս համար են գրուեր :
Ով հայրենիք անձկալի,
Ո՛հ քու ծնունդդ ալ տեսնէի
Երգեցի, մէյմ'ալ ներսէս
Ա'խ մը փրթաւ՝ ճիշդ սրտէս . . .
Օրն իրկուն եղաւ, ինձի խրատ եղաւ,
Թէ միշտ գան օրերն և անցնին կարգաւ .
Անշուշտ օր մըն ալ վեհ Հայաստանիս
Արեւ գայ փայլել' ըսի, Հայիկիս :



Թ. ՇԱՐ

Ի ՍՈՒՐՔ ԶԱՏԻԿ

Իչպէս սոխակ
Անոյշ լեզուակ
Ծառին վերև
Ճրլուլայ բարև'
Ես ալ պզտիկ
Զերդ նոյն Թռչնիկ
Արդ կայտուելով,
Փափկիկ լեզուով
Գամ ճրուռողել
Եւ աւետել

Սուրբ Յարութիւն Աստուածորդուն.



Թրբամ Թրբամ, օր անժառամ,
Բացուէ սրտիկ իմ գեղեցիկ,
Բերէ զատիկ մեզ զարնայնիկ.
Օն էղբարք, ձեռք, պար բոլորենք.
Սաբող Ապրիլ զընա կորիւր,
Թող զայ Մայիս իմ սիրելիս,
Քաղեմ ծաղիկ ի փունջ գողտրիկ:



ՅԱԻԵԼՆՈՒԱԾ


ԻՆՈՒԷՐ



ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ

ՄԱՆԿԱՆ

ՎԻՇՏԵՐԸ



ԱՌ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ
Ա.

Թռչներ՝ գարնան բարունակ,
Վրճիտ առուակ, պերճ լուսնակ,
Նուագերգ սոխակ՝ վարդենիք,
Ծաղկունք՝ ճանանչ, շուք և ցող,
Մարգեր, զեփիւռ ցոլ շող շող
Խնդրեն, բայց էս՝ հայրենիք:

Առանց քո՝ դրախտ գեղեցիկ
Եւ ձորերու դայլայլիկ,
Թէ արշալոյս ոսկեթոյր
Թէ աստղերու բոյլք պապղուն,
Եւ թէ հողմիկ գեղանուն
Անգոր սրտիս տալ հրապոյր:

Առանց քո ինչ է իմ օր,
Ոչինչ, ստուեր մը պղտոր .
Եւ ինչ իմ սէրս, որ ի զուր
Տքնի թռթռալ յայն վայրիկ,
Որ անուանի Հայրենիք .
Ով՛ յիշատակ դու տըխուր . . .

Ես, սիրուդ մայր Հայաստան,
Թողած դաշտն ու այգեստան,
Եւ տիոցըս դիեցիկ
Անմեղ խաղերն ու գեղգեղ,
Խնդրեմ օրերդ լուսագեղ,
Յուզիմ ի փառս քո ջերմիկ:

Դեռ չըծաղկած կեանքս այս սուղ՝
Դիմէ թոշնել ինչ կանուխ,
Ցերեկ սար, ձոր, զարդարուն,
Ցայգ փայլածու, արուսեակ
Դեռ չը ցոլած յիմ հասակ՝
Կուզեն ինէ մնալ թաքուն:
Մայր Հայաստան, քո աչկունք
Յօղեն յաւերս դեռ արցունք.
Ձեռն իծընօտ դէմքդ անժմիտ,
Փայլուն նակտիկդ ի սև բօղ,
Չուարթուն բաղդիկդ անյաջող
Ցերք, մայրիկդ իմ բարեմիտ:
Գլխիդ վերև տես, լուսնակ
Դառնայ փայլել յաւերակ.
Յայն աւերակ՝ յոր դարեր
Կայլակեցին արտասուք,
Դու դեռ կուզես պահել սուք.
Բարձրացուր զլուխդ, լինս տայ Տէր:
Թող պահ մը՝ մայր Հայաստան,
Մոխրոց աւեր նատարան,
Ուր և ի բօղ սուրն ու թագ.
Հրեշտակդ յերկնից այլ ժպտի,
Թող սուզն, իմ սէր գեղունի,
Ել՝, որ ցնծայ հայ փափափ:





ԱՌ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Բ .

Կայտառ մանուկ մ'եմ հայկազուն ,
 Միշտ յուզման մէջ սիրտս ալեաց պէս .
 Աչերս կայծիկ' աստղիկ' փայլուն ,
 Լուսաբերն եմ Հայ փառաց , Էս :

Կ'ուզեմ դաշտ ու լեռ ,

Թռչել վար ու վեր .

Մինչև որ հասնիմ

Ի գլուխ բլրակին ,

Նև հոն զեղգեղեմ

Իմ երգրս փսեմ ,

Ուր Հայն ունի Սեր , Միտքիւն ,

Միշտ իր հեռն է Ազատութիւն :

Երբ մայրս կարեց բերնէս իր կամ ,

Երբ և լեզուս եղաւ ազատ ,

Արդ, ազնա ես ըսաւ, ճշդեանի,
Եւ, Եւզրիէս, քայլ առ արձանի:

Սիրտդ վառվրառն,

Եւ ոգիդ արթուն,

Աղաւնւոյ նրման

Միշտ անմեղանի,

Զերթ օձ խորամանի.

Երգէ վանի ի վանի,

Որ Հայն ունի Սեր, Միռքիւն,

Միշտ իր հետն է Ազատքիւն:

Մօրքս կանթին հետ խրմեցի

Ազատութեան անոյշ նեկտար.

Սիրտս ու արիւնս զըրաւ դըրի,

Պաշտել երկնից տըւած այս բառ:

Ով՞ կրնայ դէմ դալ

Իրաւանց արդար.

Այս փառք տիրատուր,

Ապրիմ խուլ ու կուր.

Ազնա եմ երգել

Նախահարց հրաւեր:

Որ Հայն ունի Սեր, Միռքիւն,

Միշտ իր հետն է Ազատքիւն:

Հայ դիւցազանց ես զաւանդն եմ.

Հայրիկս ըսաւ Հայն է վրսեմ,

Հայն է կտրիճ, Հայ ճշմարիտ

Այն, որ նուիրէ հայրենեաց սիրտ:

Ես ինչո՞ւ չըլլամ

Այն Հայուն նրման,

Որ ուր է երթայ,


Հայ փառքով պանծայ,

Եւ Ռափառական
Երգէ ամեն ժամ :
Ուր Հայն ունի Սեր, Միռաթիւն,
Միշտ իր հեան է Ազատաթիւն :
Վատ ոգիներ ինէ հեռի
Ձի ձեր խղճին լոյսն է մարած .
Հրածեշտ փղձկէք սլաքառնցն ազգի ,
Ձար լեզունիդ ի Թոյն Թանժխան :
Իմս է Հայրենիք ,
Իմս Օրէնք ու Գիրք .
Վրէժ , մանկանց Աստուած ,
Վամ լոյս՝ հոյր մըտաց .
Մինչ շիրմիս բերան
Երգս է սլաքառական ,
Հայ , Թէ յարգես Սեր, Միռաթիւն,
Ծոցըդ գտնես Ազատաթիւն :





ՏԱՐԱԳԻՐՆ



ԵՐԳ

ԵՂԱՆԱԿ ՅՈՒՆԱՐԷՆ ԱՖԷՖԱՍԻԱՍԻ ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲ

Գ.

Կերթամ գիշեր ցորեկ լալու՝
Ով Հայաստան քու սիրուդ,
Սուրբ կուսանիդ և քաջերուդ
Հոյսն է մարած ինչ օգուտ.
Կարօտ մընամ սարիդ դաշտիդ
Եւ ոսկեծել արևուդ,
Միայն առ Տէր սա կաղաչեմ՝
Շուտ դարձընէ մեզի գուծ:

Գիտնանյ աստուած որ Հայ տըղան
Ձը դիմանար այս ցաւուն,
Մոսկ քու համար աչքէս բուռբուռ
Սրցունք վազէ օրն ի բուն.
Հայ—Հայրենիք յիշեմ ցաւով՝
Թէ քուն ըլլամ թէ արթուն,
Տրտում տըխուր երբ քեզ երզեմ՝
Սյրի հոգիս տարաբուն:

Շատ աշխարհներ թէպէտ շրջիմ,
Բայց սիրտըս միշտ քեզ սիրէ,
Ոհ՛, չեմ գիտեր, ըսէ ինծի
Որ՞ ժանտ պիտի քեզ մաշէ.
Մայրիկ մեղոյշ աչերդ արդեօք
Մե քողերով ծածկեցին.
Գերի եղայ . . . նիս անիծեալ . . .
Որ իս երկրէս զուրկ թողին:

Մայր Հայաստան, չլլար օր մ՝ աչ,
Ըսէ, ուր գամ գիրկդ հանգչիմ,
Եւ երջանիկ պայազատի
Պէս հայրենեաց մէջ ապրիմ.
Իմ վառվրուուն եղբարցըս հետ
Ուրախ ուզուարթ պարելով,
Երանութիւնդ եղանակեմ՝
Վիշտս ու ողբերս մոռնալով:

Երբ՝ հայրենեաց աստղերուն տակ
Հայոց հայրիկն ու մայրիկ
Պիտի տեսնեն որ մանչն հերկէ,
Ասղնեգործէ և աղջիկ.
Այլ երբ . . . որ հոն բարգաւանին
Հայ տանն ընտիր սերունդներ,
Եւ ծաղկապսակ տըղաք երգեն
Հարսանեաց սուրբ հանդէսներ:

Շուտ հասկըցայ, թէ ուրախ օրն
Ինէ հեռու կը փախչի,
Ախ՛, գայի քովդ սա սրտիս մէջ
Պահածներըս յայտնէի.
Ով՛ դիմանար անուշ հոտուդ,
Վարդի պէս քեզ փրցուցին,
Սև օրեր, սև ժամանակներ
Ըզմեզ հեռուն մըղեցին:

Ինչ՞ ընեմ որ սիրտս համբերէ
Գլխուդ եկած չարիքին,
Յիշողութիւնս ամեն ատեն
Թռչի ազատ երկնիս դին.
Մինչև մեռնիմ մտքէս չելներ
Սնունդ ու սէրդ, ինչ փափուկ.
Խնդումներես տեսնէի քեզ՝
Փառքըդ չըլար յիշտ ծածուկ:

Յրբ ժամանակն ի զուր անցնի
Ետքը խեղճ ազգն ինչ ըլլայ,
Միշտ չըւառիկ մընայ վախճամ
Ուր լացիս վերջն ան չըգայ,
Ուրեմն եղնենք դարձեալ երթանք
Թափուր գաղթել ուրիշ տեղ,
Վախ՛, որ մեր լոյսն հեռու քենէ
Պիտի մարի ամեն հեղ:

Բայց վերջապէս շիտակն ըսեմ
Ինչ որ անցնի հոս մտքէս,
Յուսով եմ որ քիչ ստենէն
Բնաւին արցունք չը թափես.
Մինչև այսօր շատ վրտանգներ
Լոկ քու համար անցուցինք,
Իու մի վախճար, ո՛վ հայրենիք.
Քեզ միշտ պաշտել ուխտեցինք:





ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐ

ՊԱՆԴՈՒԽՍ ՀԱՅՈՒՆ

Դ .

Երբ ծագկուտ դաշտէն հեզ ալեաց նրման՝
Քաղցր համբոյր զեփիւռ գարնան իրիկուան՝
Պարզերես սուրայ պանդխտին հիւզեակ՝
Սրբելու ճակտին քրտանց ջերմ կայլակ ,
Յըրուել հէք սրտին հինօրեայ Թախիծ ,
Ինչ՝ քաղցր ըզգայումայն ատեն Հայուն ,
Սիրել իր բընիկ հայրենիք սիրուն

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ

Երբոր ամպածրար սարոյ եակէն
Ծովասան լուանակն ելնէ գալ ման , ճեմ ,
Ինչպէս Թիկնապան զինուոր քաջարթուն՝
Շըքեղ պալատին մէջ զիշերն անքուն
Հըսիկ ի պատիւ արքային վըսեմ ,
Ինչ՝ քաղցր այն ատեն պանդխտիկ Հայուն ,
Կոսնոյ դէմ սիրել հայրենիք սիրուն ,

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ

Մինչ գեղջուկ հովիւն երգէ ի սըրինգ ,
Արձագանք ձայնին՝ այեր , ձոր ու երկինք .
Հովուական տաղքն են օրերն երջանիկ .
Ազնա միշտ յանձկոյ հեծել Հայրենիք .

Աստղերն յոյս սրտին լուսինն իր պարծանք .
Ինչ՝ քաղցր այն ատեն քաղցազուրկ Հայուն
Ողբերգել միայն հայրինիք սիրուն ,

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ

Մինչդեռ վարդի թուփ տանար սոխակին՝
Յառուակն արագոտ համբոյր տայ լուսնին ,
Ծովախաղ նաւակն արծաթէ փրփուր
Թիակաց ծայրէն սրսկէ հոյլ ի հոյլ ,
Կ'ապրի միթէ հոն անձուկ , վիշտ , կսկիծ .
Ինչ՝ քաղցր այն ատեն չըւառիկ Հայուն ,
Յիշել ու սիրել , հայրենիք սիրուն ,

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ

Մինչ գիւղեր մանկանց , հաւուց զեղզեղանք՝
Չորերն ալ թռչնոց , առուոց արձագանք ,
Եւ հեզասաղարթ հովտաց յանտառիկ
Մայեն ուլ զառնուկն անմեղ՝ ու եզնիկ ,
Վկայք Աստուծոյ՝ բնութեան արարչին .
Ինչ քաղցր այն ատեն թափառոտ Հայուն ,
Սիրել իր սփոփն հայրենիք սիրուն ,

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ

Լուսնակն երբ ի քօղ ամպերով ճերմակ ,
Պանդուխտ ճեռն ի քնար արդէն ի հիւղեակ ,

Շարժէ կընտընատոց դէմ սէրուսիրաին ,
Աչքէն ցօղ յերկիր , սրտն ձայն յերկին ,
Մինչ քունն երազոց մէջ զանի շրջէ .
Հոն անգամ քաղցր է պանդխտիկ Հայուն
Յիշել ու սիրել հայրենիք սիրուն ,

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ :





W. J. F. 1853

ՅՈՅՍ ԵՒ ՈԳԻ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Ե.

Սիրուն ժամերս իզուր սլանան,
Ինչպէս վարդուկ հողմոց բերան,
Բայց չես հարցներ երկիրդ աւեր,
Թէ մանկութիւնս ինչպէս անցնի՝
Այսպէս մինակ առանց քեզի.

Ի գողտր յիշատակ
Դարուցդ անուշակ,
Հայրենի ոգւով
Գորովդ և փութով
Վայլելու յուսով:

Գլուխս յու ծըռած շատ օր տըխուր՝
Շուտ սովրեցայ լալ այն բաղդ կուր,
Որ զերթ երազ քեզ թողլով մեզ՝
Եւ զերթ աշնան մերկեալ ոստիկ
Կուզէ տեսնել քեզ անձաղիկ:

Բայց ես մընամ միշտ
Ի կոծ և ի վիշտ,
Հայրենի ոգւով
Ապրիմ, սէրդ շուսով
Գրգուելու յուսով:

Ինչ՝ պաշտելի ինձ այն երազ,
Ուր տեսնեմ քո սարեր ծաղկած,
Եւ փայլ Ոգին Հայաստանեայց,
Ուր, ո՛հ, թռթռամ զետ թիթեռնիկ,

Մոցէդ թողվել մեզր ու հոտիկ,
Հոն և տաւղելու
Իմ սուրբ արէլու,
Հայրենի ոգւով
Իղձս այ քեզ փուծով
Յայտնելու յուսով:

Ոհ՛, ըլլայի զեփիւռ թեթև՝
Սփռել մեղմիկ բոյր քո վերև,
Յըրուել և զեղդ պատող մըշուշ:
Ոհ՛, ըլլայի ձայնուոր թռչնիկ,
Քեզ մօտ երգել սրտիս ըղձիկ՝
Ըսել լու իլու,
Թէ քենէ հեռու
Հայրենի ոգւով
Ապրիմ, բայց ախով,
Եւ աւուրցդ յուսով:

Կուգայ գարուն ծաղկօք պէս պէս,
Բիւր զեղզեղանք՝ անցնին քովէս,
Մերձի աշուն, ես ըսպասեմ
Ձեռքս պատրաստ վարդէ պըսակ՝
Քու համար եմ հիւսած միակ:
Բայց ո՛ւր այն օրեր,
Գէթ դուն ըսէ Տէր.
Հայրենի ոգւով
Մընամ ապահով՝
Պըսակուիլ յուսով:

ԱՌ ՍՈՆԱԿ Ի ԳԻՇԵՐԻ

Զ .

Ով՛ զարդարուն զարնան գիշեր ,
Այս ինչ ձայն՝ ե՞րզ կամ դայլայլիկ .
Սէ՞րս երգէ թէ լուսինդ ուստողեր ,
Բնութեան այս ո՞ր վե՛հ երգեցիկ :

Արդեօք զուարթուն մ'է երկնային ,
Մահկանացուի դաշնակ չ'է աս .
Հրաւիրակն է Հայաստանին ,
Ազնիւ ձայնիկ ուրկէ կուգաս :

Սոխակիս ճայնն է անուշիկ ,
Այն , սոխակս իմ մըխիթար .
Թըշուառներու ընկեր գողարիկ ,
Ուրախութեան ճարտար քնարակ :

Ինչո՞ւ թռչնիկդ իմ հեռուներ՝
Չեփիւռին հետ երգերդ խառնես ,
Կը սիրեն քեզ Հայ մանկիկներ ,
Ճըլվլումդ ինչո՞ւ սրտէս բաժնես :

Քննողք է առուակ քեզ , քննողք հովիտ ,
Գիշեր ցերեկ ծաղկունքն երգես .
Ո՛հ՝ ծաղիկ է և մանկան սիրտ ,
Երկնանուէր ձայնդ հոն չըսփռէս :

Պղտորեն երգդ գեան ու տերև ,
Ով՛ դու թռչնիկ դաշն իմ սիրոյս ,
Ա՛ռ այս գիշեր մանկանս բարև .
Սիրեմ ես քեզ , հէք սրտիս յոյս :

Հեծէ ոգիս , ա՛խ գայ ներսէս ,
Դեռ միշտ հեռու ձայնդ ազդեցիկ :

Պատուհանս քաց է եկնր ներս ,
Թրոխր Հայուն ողբոց մօտիկ :

Թող պահ մը ձորն , առուակ , լուսին ,
Ահա քացի ծոցըս տաքուկ ,
Թող ծառ , ծաղիկ , սէրն և վարդին ,
Թառէ յիմ գիրկ Թռչնիկ փափուկ :


Պատրաստ քեզի սերմ ու հատիկ ,
Ոսկի Թելով հիւսուած վանդակ ,
Երգ մ'ալ ունիմ ես Հայրենիք ,
Բայց չունի այդ քաղցր եղանակ :

Օն' , ձայնդ խառնէ երգիս աւեր ,
Թէ և մանուկ , սէրս չ'է՛ սլգտիկ .
Հայրենիքէս դուրս այդ ճռիչներ ,
Իմ անձկութեանս են ճիշդ ընկեր :

Հայրենիքէ դուրս , ո՛վ սոխակ ,
Այն ինչ լրսեմ ձայնդ ի դաշտի ,
Հայաստանս քեզ հետ երգել սլարտք .
Այս իմ հօր մօր խըրատ բարի ,

Չէ՞ս ալ դադրիր սոխակ սիրուն .
Ազատ ես , Թոխր , Թոխր վեհ Թռչնիկ ,
Լսէ երկինք գիշերս ի բուն՝
Քո և Հայ տղիս սլարզ դայլայլիկ ,

ՀԱՅ , ՀԱՅՐԵՆԻՔ





ՔՆԱՐ ՇԻՐՄԱՅ ՔՈՎ.

Է.

Ինչո՞ւ, ո՞վ քընար, դիւցազանց ձեռքէն,
Գուսանաց զրկէն, փափուկ մատներէն
Կնտնտոցդ առած մենացար մեղմով՝
Լըռիկ ու տխրիկ շիրիւններու ֆով:
Հայագուն նակտիդ գեղահիւս պըրասկ՝
Նունուֆար, նարգէս, վարդն ու մանիշակ,
Շուշանն ու յաամիկ ամենն իր փառքով
Թողլով զընացիր շիրիւններու ֆով:
Երկնատունկ դրախտին ափերէն գետեր,
Երասխի ափէն Տիգրիսի եզրեր՝
Ապա ի ձորոխ, յՆփրատ դիմելով՝
Ալիք քեզ տարին շիրիւններու ֆով:
Ըսէ քընար, որ սառնասէր քամին
Գարնան ու ամրան դաշտէն ծաղկազին՝
Աշնան մերկ ծառոց տակ քեզ փըչելով
Գլորեց ո՞հ, մինչ ցուրտ շիրիւններու ֆով:
Զքնաղ վարդենիք էին քոյդ տանար,

Անոնց շուքին տակ զարդարէիր լար,
Մէկդի թողլով արդ և ծաղկանց գորով,
Սըգազգած հեծես շիրիւններու ֆով:

Չայնրդ խառնըւած թեթև գեփիւռին՝
Հայոց բիւր ձորերն արձագանք տային,
Աւեր ամեն սիրտ տանջի քո սիրով,
Դու դեռ փառագուրկ՝ շիրիւններու ֆով:

Փափուկ թելերուդ դաշնակ սիրավառ
Հայոց աղջիկներն յորդորէր ի պար,
Ուր գառնուկ ու լի կայտաւէր մայելով,
Արդ ձայնդ ալ ջելներ շիրիւններու ֆով:

Քընար վշտակիր, քընար քաղցրաղի,
Ով՞ թաթխեց մատներդ ի բաժակ լեղի,
Վարդին ծոցիկէն լարերդ խըլելով
Մերկացուց քեզ մինչ շիրիւններու ֆով:

Սև հագեր սիրուդ աշխարհն Հայաստան,
Արևն ու լուսնակ չը ծագին վըրան.

Քու համար սոխակն է լըռեր ցաւով,
Այլ դուն ինչ մընաս շիրիւններու ֆով:

Այն դահիճ ձեռներ՝ որ քեզ կռփեցին,
Չառին պատուհասն երկնից լոկ բաժին,
Յընծա՛, այլ հերիք վրէժ, ցաւ գոչելով՝
Արցունք ողողես շիրիւններու ֆով:

Ել, ել զարդարուէ, հայրենի քընար,
Վշտից ձայնդ փոխէ մատներովդ նարտար,
Թող լըսէ մանկտին երգերդ գովեստով,
Վարդին մօտ ՚ ոչ շիրիւններու ֆով:

Л.О.Ю.З. ЗАКОНЪ И ЦЕНТРАЛЬ
* С.С.Р.А ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА *
7/31-1922
ИМЕНА МЯСНИКОВА
УЗЩУ И ЧИСТЫ И ЧИСТЫ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Ն. Ս. ՄԷՋՊՈՒՐԵԱՆԻ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅՈՒԱԾ

1. Սուպլինոյ Հայ ընկերացանութեան կամ Նոր Քերականի եւ Հեգարանի. Լ. սպարուքիւն. Պէտիքաւի Հայկազեան Ընկերութեան նուիրում. 1860
2. Մրակօփա Հարուած Գարնան Գիշերի Քերք. 1861
3. Ուոուսիստերք եւ Ուոուսիստեացք. Տրամախօսութիւն աղջկանց համար: 1862
4. Սահմանադրութիւն եւ Ս. Պատրիարք Սահմանադրական. Քերքում: 1863
5. Պատկ սղայոց. Գողտիկ վեպեր սղայոց համար: 1864



ՅՈՒՅԱԿ ԳՐԵԱՆՑ

ԳՐԱՏԱՆՆ ՓՍԻՋՈՒ

Սաղմոս փոքրադիր, պատկերազարդ, փառակազմ:
 Նարեկ Փոքրադիր եւ մեծադիր պատկեր. փառակազմ:
 Դասարանի Հայկազն մանկանց պատկ. փառակ.
 Եղջն փոքր մաս:

Ընթարձակ Թուարանութիւն Ս. Միքայէլեանի
 Երկհատոր:

Համարոս Բառարանի եւ խօսակցութիւն Հայ.
 Տանկ. եւ Ծռանս. կազմեալ եւ թղթակազմ:

Բառգրքակ Հայ. Տանկ. եւ Ծռանս.

Եզնիկ փառակազմ. ոսկեգօծ եւ հասարակ:

Գոսերք Սուաքիսիք վ. խալասանութիւն:

Փեղիքս եւ Պաւլիսէ Պատկերազարդ:

Ընդունելութիւն Ընծայն (Երկուիկ)

Խնդիր Միութեան Հայոց:

Վասնառականութիւն Նախնեաց:

Տենութիւն Հայրենասիրի:

Վաւերացիք. — Խնդիր Ս. զգայիս եկամուտի:

Պատկեր Հայաստանի:

Պատկեր Սուրբան Սէլիմայ:



3704

5208000

2013

